ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ՆՎԵՐՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ, ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԷԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ՑԱՆԿԸ, ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ, ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ 04/01.3/14712-2024 գրությամբ Իրավաբանների հայկական ասոցիացիայի կարծիքին էր ներկայացվել «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման կարգը, շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը, շուտ փչացող գույքի ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները, գույքի տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը և տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքով սահմանված եզրակացության տրամադրման կարգը սահմանելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր) և Նախագծերի հիմնավորումը:

Ստորև ներկայացնում ենք Նախագծերի վերաբերյալ Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի փորձագիտական նկատառումները, կարծիքը և առաջարկությունները:

## I. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁԱԾ ՆՎԵՐՆԵՐԸ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ

1. Կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված է՝ *«2. Գույքը տնօրինելու համար Կոմիտեի կողմից իրականացվում են հետևյալ գործողությունները՝ 1) գույքի տեղափոխումը և ժամանակավոր պահպանությունը Կոմիտեի կամ մասնագիտացված կազմակերպության՝ տվյալ գույքը պահելու համար հատուկ հարմարեցված վայր/երում»:* Նախագծից պարզ չէ, թե արդյո՞ք առկա է մասնագիտացված կազմակերպությունների ռեեստր կամ տվյալների շտեմարան (դատաբազա), որոնք ունեն համապատասխան ռեսուրսներ և հնարավորություններ գույքը պահելու համար: Նաև հստակեցված չէ, թե մեկից ավելի մասնագիտացված կազմակերպություն լինելու դեպքում, ինչպես է օրինակ կոմիտե կատարելու կազմակերպության ընտրությունը: Այսպես, կարգի 12-րդ կետի համաձայն՝ *«12. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված գործողություններին զուգահեռ՝ Կոմիտեն, ոչ ուշ քան մեկ ժամվա ընթացքում, <u>ապահովում է մասնագիտացված կազմակերպության</u> ընտրությունը և վերջինիս միջոցով կազմակերպում է գույքի տեղափոխումը՝ Լիազոր մարմնի կողմից տվյալ գույքի պահպանման վերաբերյալ տրամադրված մասնագիտական կարծիքին համաձայն:»*: Այս կարգավորման մասով նույնպես հարկ է նշել, որ հստակեցված չէ, թե ինչպես է Կոմիտեն կատարելու *մասնագիտացված կազմակերպության ընտրությունը:* Օրինակ, եթե առկա են երկու հավասար հնարավորություններ ունեցող մասնագիտացված կազմակերպություններ, ինչ չափորոշիչներով է առաջնորդվելու Կոմիտեն ընտրության հարցում:

**Առաջարկ**

- Ենթաօրենսդրական ակտերի նախագծերին զուգահեռ մշակել նաև մասնագիտացված կազմակերպությունների հանրային ռեեստր (տվյալների շտեմարան), որը հնարավորություն կտա նաև հանրության, անհրաժեշտության դեպքում, վերահսկել նվերների տնօրինման գործընթացը, օրինակ՝ բացառելով

հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձանց կողմից կառավարվող մասնագիտացված ընկերություններին գույքի պահատվությունը հանձնելու ռիսկերը:

- Մշակել ինչպես նաև գույքը պահելու համար մասնագիտացված կազմակերպության ընտրության կատարման չափանիշներ, որոնք կկիրառվեն Կոմիտեի կողմից ընտրության ընթացքում:

2. Կարգի 7-րդ կետի համաձայն՝ *«Կոմիտեի ղեկավարն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում դիմում է սույն որոշման Հավելված 5-ով սահմանված մարմիններին (այսուհետ՝ Լիազոր մարմին)՝ գույքի պահպանության, պահպանությունն իրականացնող մասնագիտացված կազմակերպության վերաբերյալ մասնագիտական կարծիք ստանալու համար, եթե գույքը դասվում է հետևյալ չորս կատեգորիաներից որևէ մեկին՝ ա/ շուտ փչացող գույք, բ/ պահպանման հատուկ պայմաններ պահանջող գույք, գ/ գույքը կենդանի է, դ/ ծավալով կամ քանակով պայմանավորված Կոմիտեի չի կարող ապահովել պահպանություն»:* Որպես այդպիսին, հստակ նախատեսված չէ առանձին կատեգորիա այն դեպքերի համար, երբ գույքը չի դասվում այս կատեգորիաներից որևէ մեկին, սակայն **պահանջում է շուտ իրացում**: Որոշակի կարգավորում այս առումով տրված է Նախագծերով ներկայացված *Շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկում, ըստ որի՝ շուտ փչացող է (…) 4) այն գույքը, որոնց համար սահմանված է պիտանիության ժամկետ և այդ ժամկետը Կոմիտեի կողմից գույքը պահպանման վերցնելու կամ պահատվության կամ հանձնելու պահին արդեն սպառվել է:* Սակայն այս կարգավորումը ամբողջապես չի լուծում պրակտիկայում առկա խնդիրները: Այսպես, հիշյալ հարցից բխող որպես պրակտիկ խնդիրը քննարկվել է 2024 թվականի ապրիլի 2-ին՝ առցանց ձևաչափով «ԲԿԳ ազգային գործողությունների ծրագրի բաց արդարադատության և հակակոռուպցիոն հանձնառությունների բազմակողմանի իրականացում» ծրագրի (Ծրագիր) շրջանակներում կայացած ԲԿԳ Հայաստանի 2022-2024թթ. Գործողությունների ծրագրի «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստր» հանձնառության վերաբերյալ 4-րդ ֆոկուս խմբային քննարկման շրջանակներում[1]: Մասնավորապես, մասնակիցներից մեկը ներկայացրեց հետևյալ օրինակը. հանրային ծառայողը ստացել է 60 000 ՀՀ դրամը գերազանցող

[1] https://armla.am/52108.html

համերգի տոմս։ Համերգը կայանալու է նվերի ստացման հաջորդ օրը և հանրային ծառայողը սահմանված կարգով հանձնում է՝ հրապարակային սակարկությամբ իրացնելու նպատակով։ Այսպիսով, համերգի հաջորդ օրը տվյալ տոմսն արդեն արժեք չունի։ Ինչպիսի՞ պրակտիկա է զարգանալու այս տեսակ նվերների մասով։ Օրինակի մեկ այլ դրվագով՝ համերգի տոմսը ստացվել է կամ առաքվել է աշխատանքային ժամից հետո, և հաջորդը օրը հանգստյան կամ ոչ աշխատանքային օր է, այսինքն դրա անմիջապես իրացնելու հարցը այս սցենարում մնում է առկախված։

**Առաջարկ**

- Նախագծերում նախատեսել «անմիջապես/շուտ իրացման ենթակա գույք» կատեգորիան և սահմանել այդ կատեգորիան կարգավորող իրավանորմեր։

## II. ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ

3. Կարգի III մասը վերաբերում է գույքը նվեր ստացած անձի կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը հանձնելուն։ 28-րդ կետով նախատեսված է՝ *գույքը որպես նվեր ստացած պետական մարմնի օգտագործմանը կարող են հանձնվել պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող, ինչպես նաև օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային այնպիսի նվերները, որոնք՝* (…) *3) ներկայացնում են կոնկրետ բնագավառին և նվերը ստացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կամ պետական մարմնի գործունեությանն առնչվող թեմատիկ խորհրդանիշեր, ինչպիսիք են՝ հուշանվերները, մասնագիտական գրքերը և այս տեսակի այլ առարկաներ։*

Այս կարգավորումից պարզ չէ, թե արդյո՞ք դրա շրջանակներում ներառված է նաև օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին կամ նրանց հետ փոխկապակցված անձանց

տրվող/տրված պարգևը կամ խրախուսանքի միջոցը։ Եթե ենթադրվում է, որ գույքի այս տեսակները ներառված են «*այս տեսակի այլ առարկաներ*» հասկացության ներքո, անհրաժեշտ է առավել հստակեցնել այս իրավանորմը։ Իսկ եթե այդուհանդերձ պարգևը կամ խրախուսանքի միջոցը չի ենթադրում դիտարկվել որպես *«այլ տեսակի առարկա»,* ապա գտնում ենք, որ անհրաժեշտ է վերանայել և նախատեսել նշված կարգավորումները։

**Առաջարկ**

- Նախատեսել այն պարգևների կամ խրախուսանքի միջոց հանդիսացող գույքերի ընդունման և տնօրինման կարգը, որոնք տրամադրվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին կամ նրանց հետ փոխկապակցված անձանց՝ օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ վերը նշյալների հետ փոխկապակցված այլ անձանց կողմից։

4. Կարգի III մասի 26-րդ կետի համաձայն՝ *Գույքը, որի տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի հիման վրա եզրակացություն է ներկայացրել Ծառայությունը, կարող է նվեր ստացած հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանը թողնվել միայն այն դեպքում, երբ Ծառայությունն իր եզրակացությամբ նպատակահարմար է համարել գույքն այդ եղանակով տնօրինելը։* 29-րդ կետի համաձայն՝ *հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանը կարող են հանձնվել պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող, ինչպես նաև օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային այնպիսի նվերները, որոնք՝ 1) անվանական նշագրումով կամ փորագրումով նվեր են և/կամ պատրաստված են նվերը ստացած կոնկրետ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի համար։*

Ողջունելի է անհատական նվերի կարգավորման նախատեսումը Նախագծերի շրջանակներում։ Սակայն, այս նորմի ամբողջական կիրառումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել նաև նվերի ետգնման հնարավորությունը, այն դեպքում, երբ օրինակ՝ անհատական նվերը գերազանցել է թույլատրելի նվերի շեմը։

**Առաջարկ**

- Նախատեսել անհատական նվերների գնման հնարավորությունը, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ նվերների բացահայտման, հաշվառման և դրանք հետագայում գնելու դեպքում՝ օրինական տնօրինելու հարցում։

5. Կարգի VII մասը վերաբերում է գույքը նվիրաբերելուն։ 53-րդ կետի համաձայն՝ *որպես նվեր ստացված գույքը նվիրաբերության եղանակով իրացվում է, եթե 1) Կոմիտեի ղեկավարի որոշմամբ, հիմք ընդունելով սույն կարգի 20-րդ կետով տրված Լիազոր մարմնի մասնագիտական խորհրդատվությունը, գույքը նպատակահարմար է իրացնել նվիրաբերության եղանակով*։ Այս կարգավորումից պարզ չէ, թե ինչպե՞ս է որոշվելու նպատակահարմության հարցը, արդյո՞ք նվիրաբերություն կատարելու նպատակահարմարության մասին նաև **ուղղակի կերպով** կարծիք է տալու նաև Լիազոր մարմինը, թե՝ նվիրաբերելու մասին **որոշումը միայն կայացնելու է Կոմիտեի ղեկավարը**։

**Առաջարկ**

- Վերանայել այս կարգավորումը և նախատեսել որոշակի սահմանափակումներ Կոմիտեի ղեկավարի կողմից միանձյա հայեցողական որոշում կայացնելու իրավական հնարավորության համար։ Օրինակ՝ որպես սահմանափակում կարող է Լիազոր մարմնի եզրակացությունը, որտեղ ուղիղ/ուղղակի կերպով նշած կլինի նվիրաբերություն կատարելու նպատակահարմարության մասին։

6. Կարգի VIII մասը վերաբերում է գույքի տնօրինման նպատակով կոռուպցիոն ռիսկերի գնահատմանը։ 59-րդ կետի համաձայն՝ *որպես գույքի տնօրինման կոնկրետ եղանակի առնչությամբ ողջամտորեն առկա կոռուպցիոն ռիսկ կարող են համարվել. (…) 3) օբյեկտիվ դիտորդի աչքում հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կամ պետական մարմնի գործունեության անաչառության վերաբերյալ կասկածի, անվստահության իրավիճակի ստեղծման վտանգը:*

**Առաջարկ**

- Քննարկել հանրային ծառայողի գործունեության նկատմամբ վերադաս մարմնի/անձի կողմից լրացուցիչ վերահսկողություն իրականացնելու հնարավորության

նպատակահարմարությունը այն դեպքերում, եթե հանրային ծառայողը ստացել է կամ նրան փորձել են նվիրել արգելված նվեր։

7. Կարգի VIII մասի 60-րդ կետի համաձայն՝ *կոռուպցիոն ռիսկի գնահատման համար դիտարկվում են գույքի տեսակը, նպատակային նշանակությունը, քանակը, ծավալը, «Հանրային ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված դեպքերն ու հանգամանքները, գույքը՝ որպես նվեր ստացած հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի զբաղեցրած պաշտոնը, գույքը՝ որպես նվեր տված անձի, օտարերկրյա պետության, կազմակերպության նվեր տալու մտադրությունը (եթե այդ հանգամանքն հայտնի է կամ ողջամտորեն կարող է պարզվել), գույքի տնօրինման համար անհրաժեշտ ծախսերը և այլ հանգամանքներ:*

**Առաջարկ**

- Նախատեսել նվերը ստանալու/հանձնելու վայրը և ժամանակը։ Օրինակ՝ աշխատանքային ժամի՞ն է հանձնվել, թե՞ դրանից դուրս, և թողնվել է պահակակետում։
- Հավանաբար տեղի է ունեցել վրիպակ, և 60-րդ կետում պետք է նշել Օրենքի 29-րդ հոդված՝ 2-րդի փոխարեն։ Առաջարկում ենք վերանայել։

## III. ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ, ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ

8. Կարգի 11-րդ կետով նախատեսված է՝ *Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Կոմիտեի գլխավոր քարտուղարը կամ աշխատակազմի ղեկավարը (Հանձնաժողովի քարտուղար), գույքը նվեր ստացած մարմնի ներկայացուցիչը (համաձայնությամբ), Կոմիտեի կամ գույքի ժամանակավոր պահպանումն իրականացրած մասնագիտացված կազմակերպության կամ պետական մարմնի՝ գույքը ժամանակավոր ի պահ ընդունած աշխատակիցը, ինչպես նաև սույն հավելվածի 10-րդ հրամանով ուղղակիորեն նշված այլ պաշտոնատար անձինք՝ Կոմիտեի ղեկավարի հայեցողությամբ:*

**Առաջարկ**

- Նախատեսել, որ համաձայնությամբ ընդգրկվում է նաև Լիազոր մարմնի ներկայացուցիչը, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում, ոլորտային իրավասու մարմնի ներկայացուցիչը։ Օրինակ՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը ստացել է մշակութային արժեք համարվող նվեր/գույք, սակայն վերջինս չի աշխատում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում, և ոչ էլ նախարարությանը ենթակա այլ կառույցում։ Այս դեպքում ոլորտային իրավասու մարմնի ներկայությունը նույնպես կարևոր է։

**Նախագծերի վերաբերյալ այլ առաջարկներ**

- Նախագծերի շրջանակներում նվերի հանձնման, տնօրինման գործընթացում ձեռնարկված գործողությունները և տնօրինման հետ կապված ցանկացած վերջնական որոշում, որով լուծվում է նվերի վերջնական տնօրինման հարցը, ներառել նվերների ռեեստրում։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչև թվային ռեեստրի պատրաստումն ու գործարկումը որպես միջանկյալ լուծում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ներդրել է նվերների հաշվառման ձևաթուղթ[2], ապա առաջարկվում մինչև թվային ռեեստրի գործարկումը՝ նվերների հանձնման, տնօրինման գործընթացի շրջանակներում Նախագծերով սահմանված և ձեռնարկված գործողությունները, ինչպես նաև տնօրինման հետ կապված ցանկացած վերջնական որոշում ներկայացնել փաստաթղթի (ձևաթղթի) շրջանակներում, որի հիման վրա կհրապարակվի միասնական վիճակագրություն՝ ներառելով նաև նվերների տնօրինման ուղղությամբ կատարված գործողությունները նույնպես։

- Նախատեսել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողի կողմից պատահաբար հայտնաբերած նվերների տնօրինման և/կամ հանձնման կարգը՝ սահմանելով համապատասխան ընթացակարգեր։

- Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի փորձագիտական թիմը մշակել է 2 փորձագիտական վերլուծություններ, որոնց նախագծերը ներկայացվել էին շահագրգիռ մարմինների, այդ թվում ՀՀ արդարադատության նախարարության դիտարկմանը։ Նկատի ունենալով, որ այդ վերլուծությունները, *մի կողմից,* բավականին ծավալուն են,

[2] https://docs.google.com/spreadsheets/d/1aMgb9COLCaWp_FiV0NxM8gEhgi9WU_SV/edit?pli=1#gid=1360271680

սակայն, ի թիվս այլնի, նաև պարունակում են Նախագծերում ներառված կարգավորումների վերաբերյալ միջազգային փորձի և ազգային պրակտիկայի ուսումնասիրություններ ու առաջարկություններ, *մյուս կողմից էլ,* ձեռնպահ մնալով սույն փաստաթուղթը նախկինում ներկայացված առաջարկություններով ծանրաբեռնելուց, առաջարկում ենք ներքոնշյալ վերլուծություններում տեղ գտած դիտարկումներն ու առաջարկները նույնպես դիտարկել Նախագծերի վերջնականացման փուլում: Փորձագիտական վերլուծությունները հետևյալներն են՝

1) Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված արգելված նվերների և նվերներ ընդունելու արգելքի պահպանման համար պատասխանատու մարմնի սահմանման միջազգային փորձի, օրենսդրության և պրակտիկայի փորձագիտական վերլուծություն,
2) Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների հանձնման և նվերների ռեեստրի միջազգային փորձի, օրենսդրության և պրակտիկայի փորձագիտական վերլուծություն:

**Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա**

**Իրավաբանների հայկական ասոցիացիա**

**«25», ապրիլ, 2025**